ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ

ԼՈՒՍԻՆԵ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի
կրթության կառավարման մագիստրոս,
Վանաձորի Քարհանյան դպրոցի ուսուցիչ
nahapetyanlusine96@gmail.com

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԻՄՈՆՅԱՆ

Վանաձորի Քարհանյան դպրոցի տնօրենի
ուսումնական գծով տեղակալ
vardsimonyan1986@gmail.com

DOI: 10.54503/978-9939-481-23-4-155

Համառոտագիր

Անվտանգ կրթական միջավայրը որակյալ կրթության հիմքն է: Դպրոցը պետք է լինի մի վայր, որտեղ յուրաքանչյուր սովորող և ուսուցիչ իրեն զգում է ապահով, պաշտպանված, հարգված: Դպրոցը պետք է չընկալվի միայն որպես գիտելիք փոխանցելու վայր. այն նաև անհատի ձևավորման տարածք է, իսկ այդ ձևավորումը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ կրթական միջավայրը բարենպաստ է: Որքան էլ դպրոցում ստեղծված լինի ջերմ մթնոլորտ, եթե միջավայրն ու պայմանները դրան չեն նպաստում, դժվար է հաջողության հասնել:

Սույն հոդվածում ուսումնասիրվում են հանրակրթական դպրոցում անվտանգ կրթական միջավայր ստեղծելու նպատակով տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչների համագործակցությունը և համագործակցության դերն անվտանգ և արդյունավետ կրթական միջավայրի ձևավորման գործընթացում:

Հետազոտության նպատակն է բացահայտել ուսուցիչների մասնագիտական համագործակցության ազդեցությունը կրթական միջավայրի անվտանգության, ներառականության և ուսուցման արդյունավետության ապահովման վրա: Ուսումնասիրությունը հիմնված է տեսական աղբյուրների վերլուծության, մանկավարժական փորձի ընդհանրացման և ուսումնական գործընթացի դիտարկման վրա: Քննարկվում են ուսուցիչ–ուսուցիչ համագործակցության հիմնական ձևերը՝ փոխադարձ դասալսում, համատեղ պլանավորում, մեթոդական քննարկումներ և փորձի փոխանակման այլ մեխանիզմներ: Վերլուծությունը ցույց է տալիս, որ համագործակցային մշակույթի ձևավորումը նպաստում է ուսուցիչների մասնագիտական զարգացմանը, մանկավարժական նորարարությունների տարածմանը և սովորողների համար հոգեբանական անվտանգ միջավայրի ապահովմանը: Այսպիսով՝ ուսուցիչների համագործակցությունը կրթության որակի բարձրացման և անվտանգ կրթական միջավայրի ձևավորման կարևոր գործոն է:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ կրթության արդյունավետություն, ապահով կրթական միջավայր, համագործակցություն, կանխարգելում:

TEACHER COLLABORATION AS A SAFETY FACTOR OF THE EDUCATIONAL ENVIRONMENT

LUSINE NAHAPETYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific–Educational Centre
Department of Education Management
Teacher at Vanadzor Karhanyan School
nahapetyanlusine96@gmail.com

VARDUHI SIMONYAN

Vanadzor Karhanyan School
Deputy Director for Academic Affairs
vardsimonyan1986@gmail.com

Abstract

A safe educational environment is the foundation of quality education. A school should be a place where every learner and teacher feels safe, protected, and respected. Safety is the basis of education. A school should not be perceived solely as a place for the transfer of knowledge; it is also a space for personal development, and that development is possible only when the educational environment is favourable. No matter how warm the atmosphere in a school is, if the environment and conditions do not support it, achieving success is difficult. This article examines the collaboration of teachers from different subjects in general education schools to create a safe educational environment and the role of this collaboration in fostering a safe and effective educational setting. The purpose of the study is to reveal the impact of teachers' professional collaboration on ensuring the safety, inclusivity, and effectiveness of learning in the educational environment. The research is based on the analysis of theoretical sources, the generalisation of pedagogical experience, and the observation of the educational process. The main forms of teacher–to–teacher collaboration are discussed—mutual lesson observation, joint planning, methodological discussions, and other mechanisms for exchanging experience. The analysis shows that forming a collaborative culture contributes to teachers' professional development, the dissemination of pedagogical innovations, and the provision of a psychologically safe environment for learners. Thus, teacher collaboration is an important factor in improving the quality of education and creating a safe educational environment.

Keywords and phrases: Educational efficiency, Safe educational environment, Collaboration, Prevention.

СОТРУДНИЧЕСТВО УЧИТЕЛЕЙ КАК ФАКТОР БЕЗОПАСНОСТИ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ СРЕДЫ

ЛУСИНЕ НААПЕТЯН

Магистрант управления образованием Международного научно-образовательного центра НАН РА,
учитель Ванадзорской школы Карханян
nahapetyanlusine96@gmail.com

ВАРДУИ СИМОНЯН

Завуч Ванадзорской школы Карганяна
vardsimonyan1986@gmail.com

Аннотация

Безопасная образовательная среда — это основа качественного образования. Школа должна быть местом, где каждый учащийся и учитель чувствует себя в безопасности, защищенным и уважаемым. Безопасность — это фундамент образования. Школа не должна восприниматься только как место передачи знаний, она также является пространством формирования личности, а это формирование возможно только тогда, когда образовательная среда благоприятна. Какая бы теплая атмосфера ни была создана в школе, если среда и условия этому не способствуют, трудно достичь успеха. В данной статье исследуются сотрудничество учителей, преподающих различные предметы, в целях создания безопасной образовательной среды в общеобразовательной школе и роль сотрудничества в процессе формирования безопасной и эффективной образовательной среды. Цель исследования — выявить влияние профессионального сотрудничества учителей на обеспечение безопасности, инклюзивности образовательной среды и эффективности обучения. Исследование основано на анализе теоретических источников, обобщении педагогического опыта и наблюдении за учебным процессом. Обсуждаются основные формы сотрудничества учитель-учитель: взаимное посещение уроков, совместное планирование, методические обсуждения и другие механизмы обмена опытом.

Анализ показывает, что формирование культуры сотрудничества способствует профессиональному развитию учителей, распространению педагогически инноваций и обеспечению психологически безопасной среды для учащихся. Таким образом, сотрудничество учителей является важным фактором повышения качества образования и формирования безопасной образовательной среды.

Ключевые слова и фразы: эффективность образования, безопасная образовательная среда, сотрудничество, профилактика.

Ներածություն

Դպրոցը պետք է լինի այն վայրը, ուր երեխան ուրախությամբ է

մտնում: Ուսուցիչը նույնպես պետք է ոգևորությամբ մտնի դպրոց: Նրա մոտիվացիան ուղիղ կապ ունի երեխայի մոտիվացիայի հետ: Իսկ երեխան մոտիվացված է միայն այն դեպքում, երբ իրեն անվտանգ և վստահ է զգում: Շատ հաճախ, երբ խոսում ենք երեխաների պաշտպանության մասին, թվում է՝ դա միայն հոգեբանական ծառայության գործն է: Իրականում ամենամեծ դերը հենց ուսուցչինն է: Ամեն օր շփվելով սովորողների հետ՝ նա տեսնում է նրանց տրամադրության և վարքի փոփոխությունները: Ավելի վաղ պարզելով խնդիրները՝ դրանց լուծումն ավելի հեշտ է: Այստեղ կարևոր է մանկավարժների համագործակցության դերակատարությունը: Մասնագիտական փորձի փոխանակման հնարավորությունները կնպաստեն կրթական համակարգի ներկայիս մարտահրավերները հաղթահարելուն: Հաճախակի փոխվում են ծրագրերի բովանդակությունը, դասավանդման մեթոդները, կառավարման պահանջները, բայց այս ճանապարհով միասին պետք է անցնեն, որովհետև կրթության որակը փոխելը թիմի ընդհանուր գործն է: Անհրաժեշտ է իրականացնել զեկույցներ, քննարկումներ և ուսուցչական համաժողովներ, որտեղ ներկայացվելով առաջադեմ փորձը՝ հնարավորություն կստեղծվի համագործակցության միջոցով բարելավելու կրթական միջավայրի անվտանգությունն ու ներառականությունը: Անվտանգ և ապահով կրթական միջավայր ստեղծելու համար պետք է ուշադրություն դարձնել հոգեբանական անվտանգություն կրթական միջավայրի ձևավորմանը, սովորողակենտրոն մեթոդների կիրառմանը՝ որպես երեխայի ապահովության և որակյալ կրթության երաշխիքի, ներառական միջավայրին՝ բոլորի համար. հավասար հնարավորություններ՝ առանց խտրականության: Ուսուցչի դերը, որպես ապահով և համախմբող համայնքի ստեղծողի, մեծանում է: Երբեմն հնարավոր է, որ ուսուցիչը չունենա համապատասխան փորձն ու հմտությունն այս գործում, իսկ համագործակցությունը մյուս գործընկերների հետ կարող է տալ իր դրական արդյունքները: Ուսուցումն արդյունավետ է այն դեպքում, երբ առկա է ուսուցիչ – ուսուցիչ համագործակցությունը: Որակյալ ուսուցում ապահովելու համար դպրոցները պետք է մրցակցային, անհատապաշտական կազմակերպական կառուցվածքից անցնեն համագործակցային, թիմային կառուցվածքին: Ուսուցման արդյունավետությունը շոշափելիորեն բարձրանում է, երբ ուսուցչական կազմը գործում է որպես թիմ:

Տեսամեթոդական հիմքեր

Համագործակցային մոդելի ներդրումը ենթադրում է անցում անհատական դասավանդումից դեպի կոլեկտիվ պատասխանատվություն: Սա մեթոդաբանական այն հիմքն է, որտեղ ուսուցիչների համագործակցությունը դադարում է լինել ձևական բնույթի և վերածվում է սովորողակենտրոն արդյունքների հասնելու գործիքի:

Ուսումնասիրության մեթոդներ

Հարցում, համեմատական վիճակագրություն, վերլուծության մեթոդ:

Տեսական վերլուծություն: Անհերքելի են ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման դերն ու կարևորությունը նրանց մասնա–գիտական և անձնային աճի, հանրակրթական ուսումնական հաստատու–թյան հեղինակության, ուսուցչի մասնագիտական գործունեության արդյունավետության և հանրակրթության որակի բարձրացման

գործընթացներում: Որքան էլ բարձրագույն մասնագիտական կրթությունը որակյալ լինի, այն չի կարող պատրաստել ուսուցիչներին՝ հետագա մասնագիտական ողջ գործունեության ընթացքում մարտահրավերներին դիմակայելու և հարափոփոխ պահանջները բավարարելու համար: Ֆ. Հակոբյանն ասել է, որ «կրթության համակարգում կարևոր հիմնախնդիր է ուսուցիչների մասնագիտական զարգացման տարատեսակ հնարավորությունների ստեղծումը, որը կնպաստի որակյալ մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորմանը»: Ուսուցիչների համագործակցությունը հարստացնում է նրանց դասավանդման փորձն ու նպաստում ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Սովորողների առաջադիմության վրա մեծ ազդեցություն ունի ուսուցչի կողմից դասասենյակում իրականացվող դասապրոցեսը **[5, էջ 87]:** Դասասենյակներում իրական փոփոխությունների իրականացում հնարավոր է ուսուցիչների անընդհատ մասնագիտական աճի ծրագրին մասնակցելով, որը սերտ կապված է դպրոցում ուսուցչի ամենօրյա գործունեության հետ: Համագործակցությունն ուսուցիչներին տալիս է հնարավորություն՝ աշխատակիցների հետ պլանավորելու ուսուցման ռազմավարություններ, դրանց արդյունավետությունը դասասենյակում կիրառելու և գնահատելու կոնկրետ դասարանում և կոնկրետ աշակերտների հետ: Պարբերական մասնագիտական քննարկումները և թիմային աշխատանքը նպաստում են կրթական խնդիրների համատեղ վերլուծությանը և արդյունավետ լուծումների մշակմանը: Համագործակցությունը կազմված է մի քանի փուլից՝ պլանավորում, ուսուցում–զննում և ամփոփում: Ուսումնական իրավիճակի վերլուծությունը ուսուցչին հնարավորություն է տալիս աշխատակիցների հետ քննարկելու տարբեր իրական դասարանական իրավիճակներ, ուսուցիչների և սովորողների առջև առաջացած տիպական բարդություններ և մտածել դրանց կարգավորման ուղիների մասին **[2, էջ 15]:** Փորձի փոխանակման նպատակով ուսուցիչները ներկայանում են միմյանց դասերի, դիտում ուսուցման տարբեր ռազմավարությունների պրակտիկորեն կիրառումը: Դասից հետո նրանք հանդիպում են միմյանց և կիսվում դասի մասին իրենց տպավորություններով: Ուսուցիչներն ուշադրությամբ դիտարկում են ուսուցման ժամանակ կիրառված ռազմավարությունները, վերլուծում են դրանք և կապում սեփական փորձի հետ: Ուսուցչի համար առաջին հերթին կարևոր է տեսնել, թե ինչպես է այս կամ այն ռազմավարությունը աշխատում դասասենյակում: Փոխադարձ դասալսման նպատակն է նպաստել ուսուցիչների միջև մասնագիտական երկխոսությանն ու փորձի փոխանակմանը: Ուսուցիչների ուսումնական խմբերի տարբեր ակտիվությունների ժամանակ ուսուցիչները կիսվում են այս կամ այն ռազմավարության մասին տեղեկատվությամբ, որը նրանք ակտիվ ու արդյունավետ կիրառում են սեփական դասասենյակներում **[1, էջ 21]:** Դասալսման հաճախակի ու պարբերաբար իրականացման դեպքում հնարավոր է ուսուցման արդյունավետ ռազմավարությունների տարածումը դասասենյակից դասասենյակ: Ուսուցիչների համագործակցությունը նպաստում է փորձի փոխանակմանը, հմտությունների զարգացմանը, որոնք նրանք կարող են օգտագործել անհրաժեշտության դեպքում: Այսպիսով՝ երկու ուսուցիչների միջև այս տիպի մասնագիտական փոխհարաբերությունը նպաստում է ուսուցիչների միջև փոխհամագործակցության խորացմանը և փորձի փոխանակմանը: Ֆիննական կրթական բարեփոխումների փորձն ուսումնասիրող մասնագետ Պասի Սալբերգը նշում է, որ նույն կրթական ծրագիրը չի կարող լիովին

բավարարել բոլոր սովորողների կրթական պահանջմունքները: Դա պայմանավորված է երեխաների անհատական առանձնահատկություններով, ուսուցման տեմպերով և զարգացման տարբեր մակարդակներով: Դասարանում կարող են լինել ինչպես արագ ընկալող սովորողներ, այնպես էլ լրացուցիչ աջակցություն պահանջողներ **[7, էջ 41]:** Հավասարության սկզբունքը չի ենթադրում բոլորին միևնույն ձևով վերաբերվել, այլ ապահովել յուրաքանչյուր սովորողի առաջընթացի հավասար հնարավորություն: Ուսուցման գործընթացում հաճախ անհրաժեշտ է դանդաղեցնել ընդհանուր տեմպը՝ ապահովելու համար հիմնարար գիտելիքների ամբողջական յուրացումը: Առաջին հայացքից դա կարող է ընկալվել որպես անարդարություն արագ առաջադիմող սովորողների համար, սակայն դասարանը պետք է դիտարկել որպես միասնական կրթական համակարգ, որտեղ առաջնահերթ է ընդհանուր զարգացման ապահովումը: Տարբերակված մոտեցումները հնարավորություն են տալիս համադրելու հավասարության և արդարության սկզբունքները: Դրանք կարող են իրականացվել խմբային աշխատանքների, անհատական առաջադրանքների, մակարդակային հանձնարարությունների և լրացուցիչ աջակցության միջոցով: Կորնեյ Չուկովսկին գրել է. «Միայն այն գիտելիքն է ուժեղ և արժեքավոր, որը դուք ինքներդ եք ձեռք բերել: Ամբողջ գիտելիքը պետք է լինի հայտնագործություն, որը դուք ինքներդ եք արել»: Կենտրոնանալով կրթության և դաստիարակության մարդկայնացման, սովորողի անհատականության ձևավորման, ժամանակակից հասարակության համար դրա արժեքի և անհրաժեշտության ճանաչման վրա՝ նախ և առաջ պետք է հիշել, որ սովորողը ձևավորվում է հենց ուսուցչի անհատականության կողմից:

Ուսուցիչների աշխատանքի արդյունավետության բարձրացման համար բազմաթիվ միջոցներ կան՝ մեթոդական աշխատանքի խմբային ձևեր (մանկավարժական խորհուրդներ, սեմինարներ, խորհրդատվություններ, ստեղծագործական միկրոխմբեր, բաց ցուցադրություններ, աշխատանք ընդհանուր մեթոդական թեմաներով և այլն), մեթոդական աշխատանքի անհատական ձևեր (ինքնակրթություն, անհատական խորհրդատվություն, հարցազրույց, պրակտիկա և այլն): Մանկավարժական խորհրդի աշխատանքն ուսուցչի հետ նրա աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղիներից մեկն է: Դա կարելի է իրականացնել անհատական և խմբային խորհրդատվությունների միջոցով, ամբողջ թիմի աշխատանքի հիմնական ոլորտների ներկայացման, մանկավարժության արդիական խնդիրների վերաբերյալ տեղեկատվության հաղորդման, մանկավարժների խնդրանքով և այլն: Օգտակար խորհուրդը կամ ճիշտ խորհրդատվությունն արդյունավետ կդարձնեն ուսուցչի աշխատանքը: Տարբեր մեթոդների կիրառմամբ ավագ մանկավարժը ոչ միայն խնդիր է դնում գիտելիքները փոխանցել ուսուցիչներին, այլև ձգտում է ձևավորել նրանց ստեղծագործական վերաբերմունքը ուսումնական գործունեությանը **[4, էջ 31]:** Այս կերպ նյութի խնդրահարույց ներկայացմամբ ձևավորվում է խնդիր, և ցուցադրվում է դրա լուծման ճանապարհը: Մանկավարժներն ակտիվորեն մասնակցում են վարկածներ առաջ քաշելու, գործունեության պլաններ կազմելու և խնդրի ինքնուրույն լուծման հարցերին: Ուսուցիչների միջև փորձի փոխանակման, գիտելիքների բացահայտման, կոնկրետ իրավիճակների վերլուծության ժամանակ կարող է օգտագործվել զրույցի մեթոդը: Զրույցի ընթացքում ավելի մանրամասն

բացահայտվում են ընթերցված մեթոդական գրականության առանձին դրույթները, բացատրություններ են տրվում ուսուցիչներին ավելի շատ հետաքրքրող հարցերի վերաբերյալ, բացահայտվում են նրանց կարծիքների սխալ լինելը և մասնագիտական փորձի թերությունները, ըմբռնման և յուրացման աստիճանը: Բացահայտվում են գիտելիքները, իրականացվում է կողմնորոշում դեպի հետագա ինքնակրթություն: Քննարկման ընթացքում պետք է տալ բազմաթիվ այլ լրացուցիչ հարցեր, որոնց քանակն ու բովանդակությունը հնարավոր չէ նախապես կանխատեսել: Ուստի քննարկման՝ որպես մեթոդի օգտագործումը մանկավարժից պահանջում է ունենալ մասնագիտական բարձր կոմպետենտություն, մանկավարժական հմտություն, մեծ մշակույթ, տակտ: Քննարկման ժամանակ անհրաժեշտ է իրավիճակում արագ կողմնորոշվելու, մասնակիցների մտքի և տրամադրության «գնացքը» բռնելու և վստահության մթնոլորտ ստեղծելու կարողություն: Քննարկման մասնակիցները պետք է ունենան տեսական գիտելիքներ և իրենց գործունեությունը բարելավելու ցանկություն: Հնարավոր է քննարկել տարբեր տեսակետներ, ստեղծել խնդրահարույց իրավիճակներ, որոնք հնարավորություն են տալիս մշակելու ընդհանուր դիրքորոշումներ խնդրի լուծման հարցում: Ֆ. Հակոբյանը, անդրադառնալով մանկավարժների փորձի փոխանակմանը, գրել է. «Մանկավարժական առաջադեմ փորձն ուսումնական գործընթացի նպատակային կատարելագործման միջոց է, որը բավարարում է ուսուցման և դաստիարակության պրակտիկայի հրատապ կարիքները» **[3, էջ 5]**:

Եզրակացություն: Փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է կիրառել մանկավարժական փորձի ընդհանրացման բոլոր տեսակները: Բացի այդ՝ կան փորձի տարածման տարբեր ձևեր՝ բաց ցուցադրություն, զույգերով աշխատանք, հեղինակային սեմինարներ և աշխատաժողովներ, գիտաժողովներ, մանկավարժական ընթերցումներ, մանկավարժական հմտությունների շաբաթներ, բաց դռների օր, վարպետության դասեր և այլն: Մասնագիտական կրթության արդիականացման գործընթացը պահանջում է ոչ միայն վերապատրաստման և կրթության բովանդակության վերակառուցում, այլ նաև մեթոդական աշխատանքի կատարելագործում մասնագիտական ուսումնական հաստատություններում, որոնք ձեռնամուխ են եղել նորարարությունների ներդրման ճանապարհին, փորձի փոխանակման արդյունավետ կազմակերպում:

Հարցումներ ուսուցիչների շրջանում

Բացի տեսական վերլուծությունից՝ կատարել ենք նաև հարցումներ ուսուցիչների շրջանում: Հարցումը կատարվել է Լոռու մարզի երեք տարբեր բնակավայրերի դպրոցների 12 դասվարների շրջանում: Հարցման նպատակն է պարզել՝ արդյոք դպրոցում ուսուցիչները միմյանց հետ համագործակցում են դասերը պլանավորելիս, ուսուցիչների համագործակցությունը նպաստում է սովորողների անվտանգության ապահովմանը, նրանց վարքի դրական փոփոխմանը, սովորողների սոցիալական կարգավիճակն ազդում է ուսումնական գործընթացի որակի, դասընկերների հետ հարաբերությունների վրա, և ինչ մեթոդներ են օգտագործում սոցիալապես խոցելի սովորողներին աջակցելու համար: Ստորև ներկայացնում ենք հարցման արդյունքները: Հարցմանը մասնակցել են աշխատանքային տարբեր ստաժ ունեցող ուսուցիչներ: Հարցվողների 91.7%-ը նշում է, որ ուսուցիչների համագործակցությունը

նպաստում է սովորողների անվտանգության ապահովմանը: 50%–ը գտնում է, որ սովորողների սոցիալական կարգավիճակը չի ազդում ուսումնական որակի վրա, իսկ 41.7%–ը նշել է, որ մեծ ազդեցություն ունի: 66.7%–ը գտնում է, որ սոցիալական կարգավիճակն ազդում է սովորողների հարաբերությունների վրա: 50%–ը սովորողների հետ կատարում է անհատական աշխատանք, 66.7%–ը համագործակցում է սովորողների ծնողների հետ: 75%–ը գտնում է, որ համագործակցային ուսուցումն ազդում է սոցիալական տարբերությունների նվազման վրա: 91.7%–ը նշում է, որ իրականացվող միջոցառումները նպաստում են բոլոր սովորողների ինքնադրսևորմանը: 66.7%–ը հաճախ կատարում է դասերի համատեղ պլանավորում: 91.7%–ը նշում է, որ համագործակցության արդյունքում սովորողների վարքի դրական փոփոխություն է նկատում:



Գծապատկեր 1. Աշխատանքային ստաժը

Գծապատկեր 2. Ձեր դպրոցում ապահովվա՞ծ է հոգեբանական անվտանգ միջավայր

Գծապատկեր 3. Ուսուցիչների համագործակցությունը նպաստու՞մ է սովորողների անվտանգության ապահովմանը

Գծապատկեր 4. Սովորողների սոցիալական կարգավիճակը որքանով է ազդում նրանց ուսումնական առաջադիմության վրա

Գծապատկեր 5. Որքա՞ն հաճախ եք նկատում սոցիալական տարբերությունների ազդեցությունը սովորողների փոխհարաբերությունների վրա

Գծապատկեր 6. Սոցիալապես խոցելի սովորողների հետ ի՞նչ մեթոդներ եք կիրառում

Գծապատկեր 7. Որքա՞ն հաճախ եք համագործակցում ծնողների հետ՝ սովորողների սոցիալական միջավայրի մասին տեղեկություն ստանալու համար: Դպրոցում իրականացվող միջոցառումները որքանով են նպաստում սովորողների ինքնադրսևորմանը

Գծապատկեր 8. Որքանո՞վ է նպաստում սոցիալական տարբերությունների նվազեցմանը: Որքա՞ն հաճախ եք համագործակցում գործընկերների հետ դասերի պլանավորման հարցում



Գծապատկեր 9. Նկատե՞լ եք սովորողների վարքի փոփոխություններ համագործակցության արդյունքում

Այսպիսով՝ դպրոցի կամ մանկավարժի խնդիրն ուղղակիորեն սոցիալական անհավասարության լուծումը չէ, այլ դրա բացասական ազդեցությունների նվազեցումը: Նպատակն է ապահովել, որ սոցիալական տարբերությունները չխոչընդոտեն երեխայի որակյալ կրթություն ստանալուն: Դպրոցում հավասարության և արդարության սկզբունքների ամրապնդումը ստիպում է ուշադրության կենտրոնում պահել սովորողների սոցիալական կարգավիճակի ազդեցությունը կրթական գործընթացի վրա: Հարկավոր է հնարավորինս չեզոքացնել արդեն իսկ եղած երևույթի բացասական ազդեցությունը, որպեսզի սոցիալական անհավասարությունը չխանգարի ոչ մի երեխայի՝ ստանալու հնարավորինս որակյալ կրթություն: Այստեղ կարևոր են ոչ միայն հավասարության և արդարության մասին խոսակցությունները, այլև այդ սկզբունքների գործնական կիրառումն ուսուցչի ամենօրյա գործունեության մեջ: Արդյունավետ դասարանական միջավայրի համար անհրաժեշտ են հստակ և համընդհանուր կանոններ: Այդ կանոնների մշակմանը նպատակահարմար է ներգրավել սովորողներին՝ ուղղորդող հարցերի միջոցով: Երբ երեխաները մասնակցում են դասարանական կանոնների ձևավորմանը, ավելի գիտակցված են ընդունում և պահպանում դրանք: Ուսուցիչը դասարանում պետք է ձևավորի բաց և անվտանգ

քննարկման միջավայր, որտեղ յուրաքանչյուր սովորող կարող է ազատ արտահայտվել: Հաշվի առնելով սովորողների սոցիալական և անհատական առանձնահատկություններն ու ունակությունները անհրաժեշտ է կիրառել տարբերակված ուսուցում, խուսափել հրապարակային համեմատություններից և գնահատականների միջոցով սովորողների միջև հակադրություն ստեղծելուց, աջակցել սոցիալապես խոցելի երեխաներին լրացուցիչ խորհրդատվության, անհատական աշխատանքի և դրական խրախուսման միջոցով, ապահովել կանոնների միասնական կիրառություն բոլոր սովորողների նկատմամբ՝ բացառելով ընտրովի մոտեցումները, խրախուսել համագործակցային աշխատանքը՝ նվազեցնելու սոցիալական բաժանումներն ու ամրապնդելու փոխադարձ հարգանքը: Ուսումնական գործընթացում երեխայի սոցիալական կարգավիճակի բացասական ազդեցության կանխարգելման և նվազեցման նպատակով դպրոցի ղեկավարությունը կարող է իրականացնել հետևյալ քայլերը՝ իր հնարավորությունների և համապատասխան մասնագետների հետ համագործակցության շրջանակում տեղեկատվություն հավաքագրել սովորողի սոցիալական միջավայրի մասին ուսումնասիրել սովորողի արտադպրոցական միջավայրը և սոցիալական կապերը, վերլուծել ընտանիքի դաստիարակության առանձնահատկությունները, պարզել՝ արդյոք երեխայի ցանկությունները չափազանց խրախուսվում կամ սահմանափակվում են, հասկանալ ընտանիքում կիրառվող խրախուսման և պատժի ձևերը, ուշադրություն դարձնել ծնողների վերաբերմունքին հասակակիցների հետ երեխայի շփումների նկատմամբ: Դպրոցում մշակել հստակ աշխատանքային կանոններ՝ համապարտադիր բոլորի համար: Անհրաժեշտ է դասերին հաճախակի կազմակերպել խմբային համագործակցային աշխատանքներ: Խմբային առաջադրանքներին մասնակցող սոցիալական տարբեր կարգավիճակ ունեցող երեխաներին միավորել ընդհանուր նպատակի շուրջ: Այս մոտեցումը նպաստում է համագործակցության, փոխօգնության և սոցիալական ինտեգրման զարգացմանը: Անհրաժեշտ է ընտրել ու մշակել տարիքային առանձնահատկությանն ու հետաքրքրությանը համապատասխան ընթերցանության նյութեր, կազմել պարտադիր կամ առաջարկվող գրականության ցանկ, որտեղ ընդգծված են փոխօգնության գաղափարը, հանդուրժողականությունը, համեստությունը, սոցիալական պատասխանատվությունը: Դերային և թատերական մեթոդների կիրառումն անուղղակիորեն կարող է ունենալ իր դաստիարակչական նշանակությունը: Կարելի է կազմակերպել դասարանական ներկայացումներ՝ դերերի բաշխումը կիրառելով որպես սոցիալական տարբերությունների ազդեցությունը մեղմելու գործիք: Տարբեր միջոցառումների միջոցով կարելի է ստեղծել հնարավորություն յուրաքանչյուր երեխայի համար դրսևորելու իր նախասիրությունները և կարողությունները: Անհրաժեշտ է ակտիվորեն համագործակցել ծնողների հետ՝ համատեղ աշխատանքներ իրականացնելու և երեխաների սոցիալական միջավայրի մասին ընդհանուր պատկերացում ձևավորելու նպատակով: Կենտրոնանալով կրթության գաղափարի վրա՝ սովորողի անհատականության ձևավորման, ժամանակակից հասարակության համար դրա արժեքի և անհրաժեշտության ճանաչման վրա՝ պետք է հիշել, որ նման անհատականությունը ձևավորվում է հենց ուսուցչի անձի կողմից: Իսկ դա իր հերթին ուսումնական հաստատության առջև դնում է ուսուցիչների մասնագիտական կարողությունների շարունակական կատարելագործման անհրաժեշտության խնդիրը: Եվ այս խնդիրը կարելի է լուծել միայն

ուսումնական հաստատությունում հատուկ մանկավարժական պայմաններ ստեղծելով՝ մեթոդական աշխատանքի ձևերի և բովանդակության ընտրության համար: Անվտանգ կրթական միջավայրի ստեղծման գործում կարևոր է նաև համագործակցել դպրոցի բազմամասնագիտական թիմի՝ հոգեբանի, սոցիալական մանկավարժի և այլ մասնագետների հետ՝ ընտանիքների և երեխաների կարիքները գնահատելու և աջակցություն տրամադրելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Զանկով Լ., Ուսուցում և զարգացում , - Մ., 1990, 440 էջ:
2. Համագործակցային գաղափարախոսության իրականացումը կրթական համակարգում: Գիտամանկավարժական ժողովածու, Երևան, 2011, 57 էջ:
3. Հակոբյան Ֆ., Ուսուցիչների մասնագիտական զարգացման առանձնահատկություններն ու արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ կրթության համակարգում, «Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի. Մանկավարժություն և հասարակական գիտություններ», Երևան, 2020, էջ 1-8:
4. Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Հանրակրթական դպրոցն անվտանգ կրթական միջավայր, Երեան, 2024, 47 էջ:
5. Ադամյան Հ., Խուդոյան Ա., Փափուկ հմտությունների զարգացումը՝ որպես բուլինգի
6. կանխարգելման և հաղթահարման գործոն, Երևան, 2024, 220 էջ:
7. Ալեքսանյան Ա., Իվանյան Ա., Նիկողոսյան Ա., Կին եւ տղամարդ՝ տարբեր, բայց
8. հավասար, Երեւան, 2016, 164 էջ:
9. Հայրապետյան Ս., Նազարյան Կ., Տոնոյան Ջ., Սոցիալական հավասարությունը և
10. արդարությունը դպրոցում, Երևան, 2020, 60 էջ:
11. Վանյան Ա., Հայրապետյան Ժ., Ինչպես դառնալ հաջողակ ու երջանիկ մարդ, Երեւան,
12. 2022, 134 էջ:
13. Խաչատրյան Մ. Ի՞նչ է ուսումնառության համընդհանուր ձևավորումը (ՈւՀՁ) https://youtu.be/0xMmIGFhG9M?si=gs_HXYdPZI-KE_vG (26.02.2026թ.)